Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականություն / շաբաթական 8 ժամ/ և կենսաբանություն / շաբաթական 8 ժամ/ , թվային գրագիտություն և համակարգչային գիտություն / 18 դասաժամ /,մաթեմատիկա 2 ուսուցիչ /շաբաթական 28 դասաժամ/, տեխնոլոգիա /շաբաթական 5 դասաժամ/, կերպարվեստ / շաբաթական 2 դասաժամ / և ֆիզկուլտուրա 2 ուսուցիչ /շաբաթական 35 դասաժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. սեպտեմբերի 19 -ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի N 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք.Կապան, Լեռնագործների 16:
Տեղեկությունների համար զանգահարել /0285/ 5–26–26 , հեռախոսահամարով: